Գիւղօրէք վանայ , և լերինք , և վանորայք ի հարաւակողմն :

Աղթ : Լեառն իբրև միոյ ժամու հեռի ի վանայ , յարևելս հարաւոյ նր : Ի գլուխ լերինս՝ կայ վերամբարձ քար մեծ , զոր կոչեն Ակռաի քար . որոյ մէջն է դասարակ քարայր , ունի և քարեղէն դուռն փակեալ մեծ յոյժ . առ որով երբեմն երբեմն հոսի ջուր :

Բնդոպ : Գիւղ յորում են իբրև 30 տուն , և ևանէ առատ երկանաքար ընակիչ :

Զոռոպան : Գիւղ որոյ բնակիչք իբրև 40 տուն :

Կոնիա-վանէ կամ Կոնիա-ՅԱծածկի վանէ։ Մեհնաստան՝ ի վեր բլրակի, հեռի՝ ի ձորուստանայ իբրև կէս ժամ։ Պատմեն թէ յաւուր միում՝ ի պահասիլ յանկարծ գինւոյն՝ ի նոր խորհրդեան, ՝ի նմին պահու կռնկան ՝ի նեղըլս մտել՝ ղոզկոյղ խաղողոյ եբեր մատոյց բռանալն, և յայնմանէ աւելին ընկալաւ զևբ անուն։ ՀԱՐՊԱՆԷ՝ ՝ի հայոց կոչի նաև Ճամբամոկէբ։ Գիւղ յապատաժուա վայրի, իբրև 150 տուն հայոց՝ խոկ տաճկաց իբրև 200։ ՝ի սահմանի սր լինին զանազան աղբիւր պաղոց ընտիր և առատ, խաղող, թուզ, նուռ։ Մինդ պէսպէս տեսակ խնձորոց և տանձի, յորոց երկուքն կշռեն մի օդպայ, որք կոչին մեղրիկ տանձ, մալաչի տանձ՝ որ ՝ի ձմեռան հասանել, նռնենի տանձ, նուռ։ և ՝ի խնձորոյ՝ խաշխաշի խնձոր, որոյ օրինք ՝ի ձեռըս խաղան ըզ ընդոյ խաշխաշն, և ըզ խնձորոյ անկիւրնոյ։ ՝ի ծայր գեղջս բղխեն աղի յորդահոս ջուրք՝ զոր ՝ի գործ ածեն ՝ի պէտս այգեստանեացց։ յայս ջուր ասեն լուացեալ անառակ աղջկանց՝ զրպս անէծ տալն՝ յակոբ սրբոյ հայրապետ։ Ընտանեաց գիւղ է

Թիւմ կռնկու վանից։

ՍԲ վարդան։ Տունք իբր 25 կամ 30 առ ծովուն վանայ, ՝ի մէջ վանայ և ոստանայ։ հեռի յերկոցունց իբրև ժամ 4։ հեռի ՝ի ծովէն միով ժամաւ՝ է վանք ՝ի վեր լերին ՍԲ վարդան կոչեցեալ։ Տանդէպ նարեկայ յաբևելեան կողմն նր։ Եկեղեցի նր մեծ և քարաշէն։ Հաւաք հոգ, ուղղագոյն ևս Հայոյ հոգ։ Վիճակ հին զորմէ տես ՝ի հին հայաստան։ յարևմտեան հարաւոյ վանայ և ՝ի հիւսիսակողմն առնու լերին կամ առնուասարայ։ յորում են պէսպէս գիւղորեք, յորոց ղմանս նշանակեացուք։

Խոզիկ, ուղղագոյն ևս Հիւզիկ։ ունի սպանանելոյ ՝ի նմա յիշ ձմեռ զհիւր ոք, և յայնմանէ խռովուն մեծ յուզելոյ։ Բնակիչք գեղջս իբրև 30 տուն, առ ծովուն վանայ։ ՝ի նոյնոյ եկեղեցւոյ սր Թադէոս կայ վարդ պատրիկ ըս առաքել պատմագրի, զորմէ տես անդ ՝ի Թղթ. 463։

Իլխանի գոմ. Բնակ. ՀԱՅ։ Քաւորգաւ հեռի ՝ի վերջին գեղջէս՝ է անկղայ վանք յանուն ՅԱծածնի. կառուցեալ առ անկղայ կամ խոշաքայ գետակաւ։

ՀՅՈՒՆԷՆ։ Տունք իբրև 80. իբրև քաւորգաւ հեռի ՝ի գեղջէս երևի բերդն վարդանայ քայքայեալ և անկեալ. զոր կոչեն Վարդանայ բերդ. և չինեալ ասեն ՝ի քաջէն վարդանայ, և բնակեալ ՝ի նմա ըս Ժամս ինչ։ Խէ։ Ադայս գիւղ է և ՅԱենաստան ՝ի վերայ լերին.

որ յանուն գնդին կոչի Խէտվանէ կամ Խէտուոյ վանէ։ Կղզի է։ Իբրև հինգ ժամուս հեռի ի գնդէն է վանք Թէոդորոսի Մարմնոյն կոչեցեալ, յորում ասեն բնակիլ զաբբահն. և քարընկէց մի հեռի ի վանացս ցուցանեն զդերեզման նր։ Ջայսմանէ քննուել լեալ այլուր։

Կինդանանոյ։ Գիւղ յորում են տունք իբրև 30։ Հէրէմէրս կամ Էրմէրս։ Մերձ յայս գիւղ է մենաստան, առ որով ի ձեռն անդ հաւու ձորոյ յերկրաշարժուէ ժամի զոր յիշեցաք ի վեր անդր, բայց առատաշատ վիճ անդնդախոր. ոռոսի եզ ջուր սեաւ. և ծովացեալ եղեալ ղվիճն ահագին։

Հայկայ բերդ։ Պայքայիլ տեղի անուանն, որ ի հնումն էր Հայ կոչեցեալ տեղին, ըստ գրելոյ խոր. ա. 10. * Բայց զտեղի ձնհատուած չինէ (հայկ) դատաստակերտ, և անուն կոչէ Հայ։

Հանիկեանոյ։ Մօտ ի յայս գիւղ է և մենաստան։ Գիւղ զօրեք զոր ի խորգոմոյ սկսեալ եդաք մինչև յայս վայր, անկանին ի հաւու ձոր կամ ի հայու ձոր վիճակին. բայց ի սոցէ են ի նոսա և այլ գիւղօրեք։ Նաև ի հայու ձոր ճեւին պատմեցին մեզ լինել զայն դերեզմանն մեծ, զոր Սոփանայի գերեզման կոչեն. որ է նոյն իսկ դերեզմանն նեբրովթայ կամ բելոյ. բայց մեք զնմանէ ունիմք խօսել ի ճեւին բաղնեցն, ի սատրապերէն ընդդրպուա և զնեբրովթայ լեառն։ Նոյնպես յայսոսիկ կողմանս անկանի Հիլոնի կոչեցեալ տեղին, որ է նոյն իսկ Ռելոնի ջամբրաձոյ. զոր յիշատակէ խոր. ա. 17. * Ռելունք ի ծով համիրամայ։

Գիւղօրեք և վանօրայք վանայ յարևմուտս հարաւոյ։

Ենդոպայ ձիաձնի վանի. որ և կոչի Խոռոսանդոսի վանի. որոյ յայս մենաստան ասի բնակիլ։ Ա մենաստանաւ բղխէ ակն յորդահոս, որոյ զբազմաւք ջրաղացից գարձուցեալ, գնայ խառնի ի տիգրիս։ Բոռնիոս ոչ գոլգ կամ ոչ գեղգ։ Մենաստան ի խորաձորի, որ է հռչակաւոր ասիս գուշակօղ աքաղաղի, զոր միշտ ընտրանեաք պահեն ասոնք. զի յաչ ք զէնեբբոյ՝ գադարի ի խօսելոյ աքաղաղ մենաստանին. և զի ի վէր լերանց որ առ մենաստանաւ՝ լինի բուռ վտանգաւոր յոյժ, անցաւոր ձնհոտոդք ի ձմերայնի նախ գիտեն զնոսա խօսել այսր աքաղաղն, և ապա ձնհոտդքն ի վէր լերանց։

Նոբէկ։ Գիւղ մօտ ժամու հեռի ի ծովէն ի հարաւ

ւակոյնն նորա, և 8 ժամաւ հետւ՚ի քաղքէն վանոյ։ Ա
ևրձ՚ի գիւղս և Նաբեխայ վանք. որոյ կրկին հն սա
ձուլք քարաշէնք, հանդերձ կաթուղիկէիւք կնոյ իրե
բոյ, յանուն ձմածնի, և յանուն սրբուհւոյն սան
դխոյ. յայս վենասոան բնակեցաւ սբն գրիգորնա
լուկաց. յարևելեան կողմն նկելեցւոյն կցեալ ը նմ
և ժամատուն, յորում և գերեզման սբոյն լուսակոս
խորանի սբոյն սանդխոյ։ Ա՚ւ նորին գեղջն յա
րևմուտս հիւսխոյ նը՚ի ծուխ կոյս և լեառն ապա
ռաժուա հանգեալ առաւել կղզւոյն, յորում են այրք
վկոյք. երիքն ստորև, և երիքն՚ի վերոյ, յորոց՚ի
միումն գոյ և սեղան. որ էր սեղն աղօթից նարե
կացւոյն. ուրանօր՚ի ծուխն, հայելով եաես ընդ կոյան,

ղորմէ ստորև։

Փլավանդ։ Գիւղ փոքրիկ։
Գանձակ։ Գիւղ 4 ժամաւ հետւ՚ի նորին կայ առ ափն
ծովու. ունի վենասոան փոքրիկ յանուն սբն սա
հակայ պարթևի, կոչեցեալ Լուսաւորչաց սբ սուրբ։
սակս բարեխօսուե սբն՚ի բժշկուե ցաւոց աչաց։
Ա՚յս վենասոան այլ ես՚ի միւս վենասոանէ սբն սա

հակայ ղորմէ ստորև։

Բագրեանդ։ Գիւղ առ եզերբ ծովու. զոր Բաբ ա
նուն լչնանի սանն չինել. և ես՚ի թեմին աղթամա
րայ։ Ի ծովուն անդ մերձ՚ի բաւտականդ երևին
ժայռք լինչ, ուր սանն լինել զԲերդն մանաճէհրի։
Ո՚ւրս վանք. ՚ի հայոց կոչեցեալ Բաւսուսն խորան. սակս
40 խորանացն որ՚ի նմա։ Ի եկեղեցի քարաշէն մեծ
և սհագին՚ի վեր լերինն՚ի վեր ք զգիւղն բաւտականդ.
զոր գագկայ Թ՚ագաւորն սանն չինել յամարանոյ լուր։
Ա՚ւ արևելեան ստորոտով լերինս ք՚ղքն ոստան,

ղորմէ ստորև։

Կարճակայ վանք։ Ի մերձ՚ի ծով իբրև կէս ժամաւ
հանդէպ արևմտեան կողմնն սառաւր կղզւոյն։ Ի
գեղեցիկ եկեղեցի կառուցեալ՚ի կոփածոյ քարանդ
բարձր կաթուղիկէիւք, ը զառ՚ի վայր լերինն՚ի ծա
ռախիտ վայրն յանուն սբոյ ձմածնի, և ունի խորանս
երիս։ Ջայս եկեղեցի լքեալ և ամայի, և զբջնակայ
չինան ոլք այժմ ոչնչ երևին, չինել սանն գագկայ
Թագաւորին չիւր առաքանոյ. ՚ի հարաւակողմն ե
կեղեցւոյն ՚ի բարձր վայրն կայ սեղն Թ՚ագրին առնե
նաձև քարաշէն վանդակաւոյատ։ Կոչեցաւ այս մե
նաստան կարմրակայ վանք, ղն յ՚ոջագոյն էր անդէն
գիւղ Կարմրակ կոչեցեալ. որոյ հետք ոչ երևին այժմ։
Թոմայ ստորէզյն վանք։ Մենաստան գեղեցիկ ծովա

հայ.

հայեաց , հանդերձ կաթուղիկէիւ , հետ ի կարմրա-
կայ լերւն 3 ժամաւ : Ի վեր գրան եկեղեցւոյս հան-
դուցեալ սահն զմարմին սրբոյն Թովմայի առաքելոյն
յետ բերելոյն ի հնդկաստանայ :

Կապոտիկաց աբ յակոբայ վանք : Կառուցեալ ը զաւ ի
վայր Կապոտիկ լերին , որ ի հնումն կոչեր Ընձա-
էաբս . հետի է ի կարմրակայ վանիկ լերւն 3 ժամաւ
յարևմուտս հարաւոյ նր . յեկեղեցւոջ մենաստանիս
որ է հանդերձ կաթուղիկէիւ , պահի մասն ինչ ի
մարմնոյ սրբոյն յակոբայ :

Գիւղօրէք և վանորայք վանայ յարևելեան կողմն :

Գ[illegible]ոռոպաշ . զոր կարծեն ապաւաղումն անուանս
Կոպոպաշ . զի ի նախնւոյն կռապաշտից և մե-
հենից նոցին առանդեն լինել տեղի : Կառուցեալ կայ
առ ստորոտով լերին . իսկ ի վեր լերին որ անկանի
ի հարաւակողմն վարագայ , է Գ[illegible]ոռոպաշայ աբ խաչ .
որ է մենաստան քարաշէն , որոյ եկեղեցին ունի կա-
թուղիկէ : Ի հնումն կոչեցաւ Սբ խաչ ըստ յայսմ "
վիսարվ . 26 . զոր և դնէ ի տոսպ : " Եւ հասեալ ի
, ձեռն տոսբայ , բնակեցան ՃՀԿա ինչ ի վայրն վայել-
, լուչ՝ որ կոչեցաւ Սբ խաչ , և այժմ ասի Գ[illegible]ոռո-
, պաշ , որ է ի հարաւոյ կուսէ բերդին վանայ շա-
, միրամակերտին || :

Վարագ : Ի անուն լերին որ հետի է ի վանայ իբրև
2 ժամաւ յարևելեան կողմն նր . ի մէջ վարագայ և
աղթամարայ ծովուն անկանի վան քաղք : Գիւտս լե-
րինս վերամբարձ գոլով պատել կայ միշտ ձեամբք
և ամպովք . վնյ բնմ անգամ յամարայնի յերանել
արեգական և ի ցօղել առկոց երևի ծիածան ի գե-
լեսս սր : Լինի յայս լեառն մանուշակ , քննելիւկ ,
որ է ծաղիկ կապուտագոյն և անուշահոտ յոյժ , նման
ձևոյ շուշանի . յորոց ոմանք ի նեղբոյ ծաղկին բե-
րեն ապխտակ լինչ փոշի պատեալ շուրջանակի . զոր
ժողովել բնակչացն ի գործ ածեն ի դեղ ցաւոց և
դիմաւթե աչաց : Լինի նաև ազբանցարիւն , որ է
ծաղիկ խոնարհ և կարմրագոյն յոյժ . և գեղեցկա-
տեսիլ կակաչ լայն կարմիր և կապոյտ նաև ի գոյն
խատուտիկ . Թուբիշահ , և այլ սքանչելի ծաղկունք
անհամարիք : Լինին և խոտք զնչնք , որ խաւրծիլ , և
ոսոսուն կամ սուսուն անուշահոտ յոյժ , ի գոյն դե-
ղին և խոտն և ծաղիկ նր , ևն :

Լանջակողմն լերին կոչի Սբ[illegible]ն կամ Նէբէին վարագ .

ուր է ՀՀաւագ ՏԲ Նշանի վանք. որ ունի եօթն քարա-
չեն եկեղեցի, երեքին գմբեթաւոնակ. իսկ չորեքին
կամարակնիկիւ. հինգ յեկեղեցեաց առաւ կոյս են Ը
միաւանս, իսկ երիցքին երբ երբեք կանգնաւ զաւուց
ցեալք 'ի միաւանց. անուանք եկեղեցեաց են ՀԱճա-
ծին, Սբ խաչ, Սբ գեորգ. յորում ամիսս փետ-
նջեալ ջուրս սրբոյն գեւոտադարձին. և առընթեր նո-
րին առաւ և անառ են այլ և այ երկու գերեզմանք սե-
նեկերիմայ՝ արքային, և խոշոր խաչաւնի սիկնոջն սե-
նեկերիմայ՝ որ էր դուստր գագկայ արքայի (զորս
գուցէ 'ի սե բաստեղ փոխադրեցին առա)։ Մի եւս ե-
կեղեցիք կոչին Սբ սիոն, Սբ նշան, Սբ յոհաննէս
աւետարանիչ, և Տաճար սբոյն սուխայ։

Ի միւն 'ի յեկեղեցեաց առաւ յեօթն սեղան 'ի մէջ
սեանց՝ են սեղիք ծաւծուկք, զորս արուաքուստ չէ
մարթի բնաւ տեսանել. և գալանի ելանելիք 'ինն,
յորս անգէտք ոչ կարեն մտանել. չինեալք 'ի պահ
պանուն սպասուց եկեղեցւոյն։ Իսկ 'ի Ա.ԷՐՆ վարագ
որ է 'ի վերկոյս լերին՝ հեռւ 'ի ներքին վարագոյ
գրեթէ միով ժամաւ, են երեք սաճարք քարաշէնք
գմբեթաւորք, այլ լքեալք և ամայիք. յորոց վիճոյն
գմբեթ ձամուշչի օգնու հալիլ աղան որ էր սոլ ա-
զասի պինոճորաց վանայ, քակեաց առ 'ի շինել բա-
ղանի տան իւրոյ. այլ վկին յանկանէն յախտ մահու
է 'ի ծակատիլ մարմնոյն, յանօգուտս զղջացաւ վերա-
տին շինելոյ զեկեղեցին։ Անուանք տաճարացն կո-
չին Սբ փրկիչ. Սբ հռիփսիմեանք, առ որով ցուցա-
նեն զայրն ձգնուհեաց սբց հռիփսիմեանց. Սբ ածա-
ծին՝ 'ի բարձրաւանդակի, ուր ցուցանեն զգեստնա-
փոր խուրձն Թոդկայ ձգնաւորին։

'Ի վ ը լերինս են և յետագոյ տեղիք. Տաճար Ը աբե-
ղայից։ Ն ը մէջ վերին և ներքին վարագոյ յանուն
սբոյն գէորգայ առաքելոյ։

Վանք սալնապետ։ Կոչեցաւ այսպէս սակս շինել զո-
րոյ մեծամեծ սալիւք ի քարաժայռ, և է յանուն սբոյն
գրիգորի լուսաւորչին, հեռւ 'ի վերին վարագոյ
միով ժամաւ. ունի տաճար երիս ԱՀածնի, Յո-
հաննու մկրտչի, և Սբոյ լուսաւորչի, ուր աղօթեալ
ասեն սբոյն։ Ջուր սր գոլով բարեհամ ընտիր, օր ը
օրէ կրեն անտի առ վաչոյն և առ եէնիչէր աղասին
վանայ։ Ա.յս ժ ը եկեղեցիք են կանգնեալ ը առան-
գիոյ բնակչաց 'ի յիշատակ ժ ը լուսաւորչին սեանցն,
որք երևեցան 'ի նահանջին յամին 655, 'ի յայտնէն
սբոյ խաչին աղօթիւք Թոդկի ձգնաւորին։

կոչ-

Կարմրաւոր։ Գիւղ կաւաւոցեալ յայն կողմն լերինն՝ որ հայի ի վան քղաք. և այս լեառն է հանդէպ լերինն վարագայ ի կողմն վանայ խոնարհ ընթերք ղվարագ. ուր ընթեր գեղջս է մեծաւտան կոչեցեալ Կարմրաւոր ըստ ձեռագրին. որոյ եկեղեցին ունի կաթուղիկէ։

Շուշան։ Գիւղ քառորդաւ ժամուս հեռի ի մեծաւտանէն կարմրաւորայ. յայն սակս առաքել զկարմրաւոր յայ մեծաւտանն կոչէ Շուշանիոյ վանք։

Նոր գեղ։ Մերձ ի վան. թուի լինել նոյն ըստմէ պատմէ առաքել, թէ յահագին երկրաշարժութենէ անդ՝ եկեղեցի նոր հիմնուվին ի քաց ոստուցեալ, և ըստ չափու արտոյ հեռացեալ ի տեղւոջէն, ապա քանդեցաւ։

Գիւղօրէք վանայ ի հիւսիսակողմն։

Արտափոս։ Գիւղ տաճկաց մերձ ժամուս հեռի ի վանայ։

Լէկ։ Գիւղ առ ստորոտով ապառաժոտ լերինն, մերձ ժամուս հեռի ի քարափոսէ. յապառաժոտ լերինն անդ է եկեղեցի ամենասրբուհիւք, ուր դնան յուխտ յՕտամատրան հիւրակէն։ Նոյն երևի լինել որ ի հնումն կոչէր Լէկայ գեղ։

Շահ պաղէ։ Ալսպէս կոչեցեալ ասեն զայս գիւղ, որ Թագուհեանի Աղբայ այգի. իբր ի յիշ ժամուս շահ ստուտսն աղբևն սկսեալ ի տաշարել զվան զամս 7, աստանօր բնակեալ սէհսպէս այգիս տնկեաց. և յետ 7 ամաց ոչ կարացեալ առնուլ յուտատուր զբերնոց տեղւոյ մերձնեցաւ անտի։

Հաճէբակի. Գոռանէնց։ Գիւղօրէք ոչ այնչափ հեռի ի վանայ։

Աբ ուսկ կիմ Երբնայ աբ ուսկ. յանուն մերձանիցն Երբերին գեղջ։ Վանք իբր 8 արեղայից ի վեր լերինն, և եկեղեցի յանուն սրբոյն ասհակայ պարթևի, իբր 3 ժամուս հեռի ի բերդէն համկոյ։ Ցուցանեն ի սմա զաջ սրբոյն. ի սմին եկեղեցւոջ է և տապան ամն յուսկայ, որ է հայր ստեփաննոսի վիշապի ի ժէ դարուն. առ նմսին այժմ աշխուատակալ կաթուղիկոսին աղթամարայ։ Յանուն սրբ և այս լեառն բառերագրեալ կոչի Աբ ուսկ. որ հեռի է ի վանայ իբրև 8 ժամուս. իսկ ի լեռնէն վարագայ իբրև 9 ժամուս. գլուխ լերինս ի ձմերայնի և յամարայնի պատեալ կայ միշտ ձեամբք և ամպովք. վեց ոտ ի վարագ նոյնպես և ի գլուխ սորին, բայց անգամ յամին ի ցօղել առտուց

երևի ծիածան. քերէ պայն ամ խոտս և ջնաղիկս՝ պրօս քերէ վարագ լեառն, բայց՝ի ծաղիկն կոչեցեալ աղբրանցարիւն։ Ի գլուխս անդ լերինն՝ են քարաշէն խաչք քառեակք. յոյր սակս զգլուխս լերինս՝ բիւմ անգամ ղլեառն իսկ ողջոյն՝ կոչեն խաչ գլուխս. ՚ի ոճոն համբարձման լինի հանդէս մեծ ուխտաւորաց, որք յամ կողմանց վանայ յայս լեառն հաւաքին բազմութեամբ կառաց թմբկիօք և փողովք։

ՔԷՕԼԱՆԻ։ Գիւղ որոյ եկեղեցին է յանուն ՁԾածնին. և է ՚ի Թեմն սբոյն սահակայ։

ԷՋՄԻԱԾԻՆ։ Փոքր լեառն ասպառաժուտ հետւ ՚ի լեռնէ սբոյն սահակայ իբրև կէս ժամաւ. է անդ մեծ նստատան 4 և 5 աբեղայից յանուն էջմիածնի, յոր մէ կոչեցաւ և լեառն. առ ստորոտով լերինս՝ է և այլ փոքրիկ վանք նոյն աբեղայից էջմիածնի յանուն ՁԾածնին։ Այս լեառն ունի առաջի իւր անուտաւ կալնի մէջ ծառոց, որ և է մերձ յոյժ ՚ի ծովն վանայ։ Անդ առ ծովեզերք երևի բերդ քայքայեալ. զոր կոչեն փլած բերդ։

ԵՐԵՐԻՆ ԿԱՄ ԷՐԷՐ։ Գիւղ առ ստորոտով լերինն սբոյն սահակայ. յոյր սակս բիւմ անգամ կոչի և այս գիւղ Սբ սահակ. և է Թեմ էջմիածնի վանից, հառուցեալ առ ծովուն վանայ. բնակիչք նր իբր 60 տունք. է եկեղեցին կոչի սբ յոհաննէս։

ՄՈՒՄԲ։ Առ դէտսն որ յանուն գիւղն կոչի Մուշ գԼՔ. յայս գիւղ լինի որսորդուն տաւեխ ձկան։

ՀՂՆԱՆԱ ՎԱՆՔ։ Գիւղ առ նովին մարմէտ դէտով։

ՋՈՒՂԱ։ Նոյնպէս գիւղ առ մարմէտ դէտով։

ՀՂԻՒՐ։ Առ սուլաւ անցանէ և ջուր լինէ. ՚ի մէջ գեղջս ՚ի վէր լերին են վանք հրկին. որ կոչին ՀՂԻՒՐ ԿԱՄ ՀՂԻՒՐՈՑ ՆԲ ԳԷՈՒՂ. ուր նստի առաջնորդ գեղջս։

ԽՈՒՆՈՑ ԿԱՄ ՀՈՒՆՈՑ։ Գիւղ առ ստորոտով լերինն, առ որով անցանէ ևջուր լինէ։

ԵՒՄԱԼ։ Գիւղ փոքրիկ։

ՁԻՐՈՒՆ ԿԱՄ ՁԻՒՐՈՒՆ։ Ընդեղն առատ գնիշն անուշ կաւ ձակերտս առանց սըոի. ուստի սիրեն ՚ի համօրէն գաւառն վանայ։

ՀՈՄՈՒՔ ԿԱՄ ՀՄՈՒՔ։ Գիւղ պարսպատատ յայն կողմն աղթամարայ ծովուն՝ որ անկանի հանդէպ վանայ. են ՚ի քղքիս տունք իբրև 150 տաճկիք և հայք, և մի եկեղեցի, և է Թեմ լիմայ։ Ունի բերդ ՚ի գլուխս քաղաքատուր լերին. յոր չիք լինչ ճոխ հելանելոյ, այլ եղեջ սանդուխս և գերանս այնպէս եկանեն ՚ի վէր բիւմ

բիշմ գիւղաքաղաքէ. ՚ի վէր բերդին երեւին աստ և անդ դրօճածք, որոց տատք անծանօթ բնակչաց։ Անուն ղՅամէ լինել ՚ի հնումն բերդ գնուենեաց, այլ աճ ղԱմիւռ ՚ի հին Հայաստան։

ՀՁաձէն։ Գիւղ հանդէպ լինոյ, հեռի ՚ի նմէ երկու ժամու երթս, և է ՚ի Թեմի նը. բնակիչք երկու 40 տուն. անդ է եկեղեցի գեղեցկաչէն հանդերձ կապ Թուղխիւք յանուն յՍածծնի. յորոյ անուն կոչի ցաւ և այս գիւղ։ Յաւուր ծոմի վերափոխման դէմ մեռ աստ բազմութիւն ուխտաւորաց երկու 8 հազարաց. ուր ցուցանեն զհողաթափ և զարկանելն գլխոյ սրբոյ կուսին։

Ճանի կիմ Ճանիւ։ Փոքր ինչ հեռի ՚ի ծովէն յարևելս լեառն կողմն լինոյ. և է ՚ի Թեմի նը։ Բնակիչք սր երկու 50 տուն. ունի աղբիւրանք դուռլա ՚ի ջրոյն՝ որ բղխէ աստէն. զոր և բաժանել և հաւաքել աստ և անդ ՚ի մուսմ եօթնեկի գառնոյ ՚ի յաղ առատ. մինչև ՚ի ժամին յորժամ ոչ անձրևէ, բերէ ՚ի մուսմ մի այն եօթնեկի 40 հազար օդպայ։ Ալ այժմ առնկ քաղքացիք վանայ յաւիշտակէցին ըմ մեծի մասին ընդ ամրութեամբ սր, և լինոյ Թողլն տակաւ ինչ։

Կէյան։ Գիւղաքաղաք ուր նստի պէյ, հեռի ՚ի վանայ երեքօրեայ ճանապարհաւ. եւանէ աստի երիանաքար ընակիչ։

Հաւլակ կամ ՀՁուլակ։ Գիւղ յորում են երկու 60 տունք. երկու միով քառորդաւ մերձ ՚ի ծովակին աղի, որ յանուն գեղջս կոչի ծով Հաւլակու։

ՀՁաձձոնի վանք կիմ Հաւլակու վանք։ Վանք քարաշէն երկու կէս ժամաւ հեռի ՚ի գեղջէն Հաւլակայ. կապ ուսցեալ առ աստուածով երկին։

Խաւաւնոխ։ Գիւղ յորում են երկու 100 տուն. 2 ժամաւ հեռի ՚ի Հաւլակ գեղջէ ՚ի խոտաւէտ գաշտի։ Եալխուզ աղաճ։ Անկանի յարևմտեան կողմն խոտաւ կօնիսոյ, առ ծովուն Հաւլակայ, որոյ բնակիչք են երկու 40 տուն։

Կղզիք ծովուն վանայ։

Ոսրք կղզիք ոսրք գտանին ՚ի ծովուն վանայ, անք կանին ՚ի գետին վանայ, ոսրք են։

ՀՁղնամաղ։ Կղզի յարևելեան հարաւակողմն ծովուն մեծ ՚ի զառատէր, և փոքր քան զկնին և ՚ի կիսոյ. բայց ՚ի կղզի է ածու կաթուղիկոսի ՚ի ժ՚ի գարէ անդ ու մի մինչև ցայժմ, յորմ սակս ՚ի զայլան երկեղի հանդ

գիսացաւ. և յանուն նր նաև ծուխն կոչեցաւ. հեռի է ի քղքէն վանայ իբր 8 ժամաւ : Յայս կղզի է մեծ նստատան մեծահառոյց ՍՔ խաչ կոչեցեալ, շինեալ ի գագիկայ Թ[illegible]րէն. եկեղեցի սք յանուն սրբ խաչի շինէ առհնրկ ի վնիշն կոփածոյ քարանց. որմունքն և առաստաղք խաչաձև ըստ արտաքին որմոց. և սուղ ինչ փոքր ք ղեկմիածնին. ունի կաթուղիկէ բարձրա կառոյց զարդարեալ արտուղաւոր ձևով, իբր սէք գա շն. արտաքուստ եկեղեցւոյն շուրջանակի յորմն քան գահէլ կան ի վիմի մարդաչափ արձանօք պատմուն հինն և նոր կտակարանաց սկսեալ յարարչէն մինչև ի համբարձումն քրի : Խակ ի ներքս եկեղեցւոյն են պատկերք անօրինութեց քրի, նկարեալք ի նախնեաց : Ունի ղերիս դրունս ի հիւսիս ի հարաւ և յարև մուտս. ի վր հարաւային դրան ունի զանգակատուն սիմնաղարդ ի համան կոփածոյ քարանց՝ որ բարձ գանայ մինչև ի տանիս եկեղեցւոյն. և կանգնեալ կայ հինն նր ի վր չորից սեանց. խակ միջին յարկ գահատան կանգնեալ կայ ի վր վեց սեանց. և ունի դուռն մատնելոյ յեկեղեցին. ուր կայ տեղի ամպիոն նաձև պատեալ քարաշէն վանդակօք, և զարդարեալ առիւծաձև քանդակօք և պնդի նկարուք, որ էր տեղի գագիկայ Թ[illegible]րէն ի կաչն խւրոմ յեկեղեցւոջ : Ի յարևմտեան դուռն ունի դարպաս, քարաշէն կանգնեալ ի վր չորից սեանց, շինեալ ի յեսային ժամս իբր վերնատուն կանանց և մանկանց զեղջն՝ որ կործան եալ կայ այժմ : Ի ձառընտիրս ինչ այսր կողման պատմի Թէ իբրև ի ոչ Թուականիս անկաւ կաթուղիկէ եկեղեցւոյ ոք խաչին, և վերստին նորոգ շինեցաւ : Առընթեր եկեղեցւոյս են և այլ կրկին եկեղեցիք քարաշէնք, յորոց մին կոչեցեալ ոք տեւիանոս՝ է զատուցեալ. խակ զմիւսն կոչեցեալ ոք սարգիս որ և անկանի ի հիւսիսային կողմն՝ զկնի միացուցին, և արարին իբրև աւանդատուն մեծի եկեղեցւոյս : Ի շրջակայս մենաստանիս ատ և անդ կան երեք եկեղեցիք քարաշէնք. ղորս շինեալ ասեն խլհանոց գագիկայ Թ[illegible]րէն՝ որք ըստ նմ եկին ամրանալ ատեն. այս եկեղեցիք էին ատեն յերջադոյն իբրև ։ , այլ այժմ երեք միայն մնացին :

Ի յարևմտեան ծայր ալիճամար կղզւոյս ի մէջ ծո վուն է սեպուհ լինչ քարակատուր, փոքր լինչ բացատ ի կղզւոյն. ուր ի ցածանալ հրբեմն ջուրց, մարթ է անցանել նաև առանց լինչ նաւակաց. առ ատորտ տով սր ի ծովեզերին է գեղեցիկ եկեղեցի որ պ[illegible]ր

լինել՝ ի դադիայ Թիգրէն՝ ի կոփածոյ քարանց . յեկել ղեցաղ ասա սահին հին քուանք նիշատակ առանց երկաթոյ , ղև ուխտաւորք ըզ Ձիկս Ձիկս՝ ի բաց տան ղերկաթեան կիմ ղտէգան : Ի դլուխ քարաէրինա ասեն լինել՝ ի հնումն Աղլամաղ կոչեցեալ ամրոց . որ՝ ի Ձիկս արշակունեաց էր սեպհական ըռշտունեաց իշխանին :

Յաղթամարտ կղզի բնակեալ կան 40 կիմ 50 անձինք առհարկ՝ ի հայոց . որք և ամի ամի հատուցանեն տէրանց մանրիքեանէին 600 կիմ 700 ղրուշ : Փոքր ինչ յարեալ էր յայս կղզի և գիւղ հայոց երբ 500 կիմ 600 տունք , որք արհեստիւ էին նաւավարք , այլ այժմ անհետ եղև գիւղն :

Ի Թեմի աղթամարայ կաթուղիկոսին են երիսեակ կղզիք հանդերձ Թեմիբ իւրեանց , և գիւղօրէք որք անկանին յարևմուտս հիւսիսոյ մարմնոյ գետոյն , յորում են համուկ և այլ գիւղօրէք . իսկ գիւղօրէք վանայ ձգտին՝ որք անկանին՝ ի միւս կողմն մարմնոյ գետոյն , և վան ըզդք , են՝ ի Թեմին էջմիածնի բայ՝ ի գիւղօրէից ինչ , որ նարեկ՝ որ է՝ ի Թեմին աղթամարայ . նոյնպէս և վիճակքն Ճուղամերկի մինչև և շատախ կոչեցեալ . նաև խիզան և շիրուան , են՝ ի Թեմի կաթուղիկոսին աղթամարայ . և զմիւսոյնն առնուն՝ ի նմանէ :

Աղթ : Կղզի փոքր ըզ զայլ երեսին . միով մղոնաւ հեռի յաղթամար կղզւոյն յարևմուտս նը . և միով մղոնաւ հեռի՝ ի ցամաքին հանդիպ գեղջն նարեկայ : Ասա կղզի կոչեցաւ Աղթ . քանզի աւանդեն թէ ոչն դրիդոր նարեկացի ըզ իւրում հանապազորդեան սովորութէ երթալ՝ ի տէղի աղօթից իւրոց , որ է այրն ներին նարեկայ (զորմէ դրեցաք՝ ի վերոյ) օրըստօրէ ցաւագին սրտիւ խնդրէր զիուրեանէն տէառնէ զքէ և զնը կոյսն . ոմն և՝ ի նոյն իսկ ժ ըզ աղօթեան ոչխն երևեալ , ուր ասէ . " Ա՛չ՝ ի տուրան՝ այլ՝ ի տուօղն յաւէտ կա-
• ծատիմ . . . ոչ կենացն փափագանօք , այլ կենարա-
• րին յիշատակաւն միշտ ձեռնձերիմ . . . ոչ զհանդիսան
• խնդրեմ , այլ զհանդուցչին ղերեսս աղաչեմ . ոչ
• հարսնարանին խնձոյիւք , այլ փեսային անձկու-
• մաչիմ . . . աներկիմիտ յուսով հաւատամ . . . զնոյն
• ինքն տեսանել ։ Սոյն օրինակ բանիւք եւացեալ անձկուք յաւուր միում զաչան՝ ի ծուխն և՝ ի սոյն կղզի գարձուցեալ , եւես անդ զնը կոյսն զնծդորդին ունել ըսւ՝ ի գրկին . և ճառագայթարձակ պայծառացեալ ծուխն և կղզին՝ ի նշուլից նոր կուսին և միածնին . յայնժամ

ժամ՝ լքեալ՝ ի լեռնէն փութալով և երդեալով զայն երդ նոր (կամ ոտն Թուխն զկնի՝ ի յիշատակ սեպհեան) ՝ի բարբառ սեղջոյն. Ա՛յքն ծով՝ ի ծով ծիծաղաց խիտ ծաւալանայր յատաւօտուն, երկու փայլակ նաձև արեգական նման. զոմն՝ ի ժիին լքել յատաւօտ ևս ելոյս... Հոսեր զեվեհան ըստ վիմեանս, հանդ դարտիկ խաղայր... բերանն երկներթի՝ վարդն ՝ի շրթանց կաթէր, լեզուին շարժուն քաղցրեր գանայր տաւիղն։ Ծոցն լուսափայլ, կարմիր վարդ դով լցեալ. ձայն քաղցրանուագ որ՝ ի նմէ հնչէր։ Գևղեցիկ պատմուճանաւն զարդարէր էր... Գոլ սին արծաթափայլ ոսկեստուն, համարակատ յաղանց, յականց շափիւղայ մանրատնտուկն յօրինուած ծով պճնել։ Անձինն՝ ի շարժել մարգարտափայլ գեղով. ոտքն՝ ի գնալ՝ շուն՝ ի կաթիլ առնոյր։ Եւն. ուր առաքելք զկերպարանս սրբուհւոյ կուսին։ Ա յսպիսի երգով անցեալ ըստ ծուխն երկիր ցամաք, անկանէր առաջի ոչ ոյ կուսին. իսկ ոչ ոյ կուսին առ նա ձայնել Հր պէտ զոր խնդրելիր, յայտնեսցէ ա սեն ինաց անուն կղզւոյն առաւեր. զայն բառ առեալ կրկներ ոչն՝ ի բերանն։ Եւ Թերևս զայն սեպհ և գայտնուն կամի նշանակել ոչն յատկին՝ ի լինել. Ա՛ի իրօք վիճաստակաս... առ յայտնուեան ուծայինս, առ երևմուտեան արարչագիրս... առ այն՝ զոր տես սի աչօք իսկ խոնարհ։

Յետ այսր սեպհեան՝ ի յիշատակ նորին վինեցին մեհեանս և կիսեցի յանուն ուծածնի. այլ զկնի յանցանել ժամուց քանի քանի, յակոբ վիճակ այլ ծուռմանքան՝ ի գիշէն բառնալոյ յայսմ գարուս նորոգ վիճակաց զմեհեանսն, և ժողովել՝ ի նմա արեգայս 6, յետ վեց ամաց վինուէ գնաց՝ ի ախարսիքիր. և զի ոչ գիտեր կառավարել զնչուս օսմանեանց՝ այլ գնայոց և գբերդաց միայն, յանկանիլն նր՝ ի մահճի հիւանդութեան, թշնամիք նր հնարիւք խնդրեալ զնա ի մահ մատնել, զի վգեն այլազգեաց. իսկ յետ փարատելոյ հիւանդութեան՝ միաք նր յինքն դարձեալ՝ ի բաց եթող, և բղխեալ շարչարանօք յանձն էառ անդէն զմահ վ քրիստոս նէուէ յամին 1772։ Իբրև լուան քուրդք վանայ ըզմեռանիլ նր, իսկ և իսկ կողոպտել զմեհեանսն՝ ի զարդուց կործանեցին։ Ոսկի ոչինչ երևի այժմ՝ ի համբերն կղզին, բայց միայն տաճարն քարաշէն լքեալ և ամայի. և իբրև 40 ծառք սախրզի. զոր՝ ի հայ բառ բառ՝ ի նոյն կոչմանս կոչեն Պամի ծառ։

Կարս։ Ա՛յս կղզի անկանի՝ ի հիւսիսակողմն աղեա-

ման

մարայ կղզւոյն իբրև 18 մղոնաւ հեռի՝ ինամանէ ծո-
վափնայ ձնհով: Կոչեցաւ Կոյ, զի գոլով մերձ
յոյժ՝ ի ցամաքն, ՚ի պակասել երբեմն ջուրց՝ լինի
ցամաք կղզի և ոտիւ թէ կոյր ըստ ցամաքն. յոր կարէն
դնալ առանց նաւակի: Ի սմանէն վանք կայ անապատ
կառուցեալ յանուն սուրբ կարապետին. որ և կոչի Ա-
նապատ ըստ կարապետի. յորում ամիսս մի՝ սկսեալ ի
սուրբն: Թեմ սր են գիւղօրէքն Մարմէտ. Ա-
մենաշատ. Խաւենց. Անանաւանք. Եկմալ. Ճերաշէն:

Տէս սոսրև և զևմ կղզի:

Էմ: (ա) Մեծ ք զնոմ կղզիս վանայ ծովուն. 40,
50 մղոնաւ հեռի ՚ի կղզւոյն աղթամարայ յարևելս
հիւսիսոյ նր: Ի ՚ի սմ ամենասուն և եկեղեցի յանուն
սրբոյն գեորգեայ, յորում ամիսս մի՝ սկսեալ ի
յոսկերայ սրբոյն: Թեմ սր են գիւղօրէքն՝ Ազձաձին.
Ճանէ. Տատապէ. Նորշէն. Հապէս. Նորվանց. Գոմս.
Շահնէպէ. Խձիւկ. Համուկ. Բէզտուրիպ: Ի յերկուս
կղզիս ՚ի կատուց և ՚ի լեմ բնակին սովորաբար իբրև
200 անձինք. 100 ՚ի մին, և 100 ՚ի միւսն. այլ չնք բը-
նակութի Ցիկ ատնց, և ոչ Թոյլ տան մտանել կա-
նանց. են ՚ի նոսա եպիսկոպոսունք, աբեղայք, և մշակք սը-
խատաւորք, հրաժարեալք զամն ոպրոյն ՚ի մսեղնոյց,
և միայն բանջարեղինօք սրմանօք և կաթնեղինօք շա-
տացեալք. միանգամ միայն ՚ի հնրկ սուրբ Ճաշեն, որ
է ի սեպտեմբերի. որ կամի ՚ի սեղանատան Ճա-
շէ՝ միտ դնելով գրոց. և որ կամի առանձին ՚ի սե-

նեակ իւր:

Ի մէջ գիշերի կանխեն յեկեղեցի, և յամում աւուր
զուէթ կանոն ասելոյն ոպրոյն կատարել. ապա սկսա-
նին ժամերգութիւնն Հայնաւոր երկարա-
ձգեաւք, մինչև զնոյն երկոյն արևու հասցնէ կատարեն.
յամում աւուր ասելով զաղօթսցոյց քարոզն Ճա-
շու ժամուն, և զնոմ երգս խաղաղականին: Նախկին
և գլխաւոր եկամուտ երկուց կղզեացս՝ է յողորմութ
զորս ժողովեն ՚ի մեծամեծ քրքաց: Եկիք՝ յատկարա-
կաց որք ՚ի ցամաքն հանդէպ կղզւոյն, զորս ինքեանք
մշակեալ ժողովեն ցորեան և այլ արմտիս. զի երկիր
լեմ կղզւոյն թէպէտ է մեծ, այլ ապաւաժուտ գո-
լով չէ սերմանելի: Երբ՝ ՚ի տասանորդաց զորս ժո-
ղովեն ՚ի գիւղօրէից թեմի իւրեանց. մի մի կիս եր-
կու քիլե ցորեան, գարի, ևն, ըստ մեծուն և ըստ բա-
զոց իւրաքանչիւր գիւղօրէից. բայց այս ոչինչ չահ

(ա) Լինին յոնարէն նշանակի Լիճ:

բերէ նոյ, զի պրէԹէ զձմեռն ծախեն՝ ի պէտս նոյն գիւղականաց, որք անդադար երԹևեկս առնեն՝ ի կղզին. եւ բաքանչիւր եկելոց գիւղականաց և այլոց ամէն կերակուր դնելով առաջի. ոչ սակաւ ծախս առնելով նաև՝ ի Ճնշի՝ ի ժողովելն անդ զտասանորդսն։ Իսկ տուրք երկուց կղզեացս՝ է տուրքն զորս սան տէրանց զհամԹիւ. զի այս երկոքին կղզիք են սեփհական գեղին կոչեցեալ Թիմնոս աղայ որ՝ ի վան քաղաք. որոց սեփհական են նաև վանորայք նաբեկայ, գուրուպաշայ, և կռնկու. բայց զկնի ժառանգաւորաց ցեղին բաժանել զտուսա՝ ի մէջ իւրեանց, լիմ եղև սեփհական Թիմնոսին՝ որ ամբարձաւ՝ ի փաշայուԹէն վանայ. իսկ կառոյց կղզի՝ հաձի մնձմնուտ աղային եղբօր Թիմնոսայ։ Ասհմանել տուրքն զորս ամէն ամի ունին տալ իւրաքանչիւր կղզի, է 1000 ղրշ. այլ սովորական տուրքն գրէԹէ հասանի՝ ի 2000 ղրշ. սակս անհնարին բռնուԹեց և չարչարանաց տէրանց, որք և ստէպ ստէպ փոփոխեն զառաջնորդս, զի ԹէՀ մին ոչ հատուցանէ, միւսն հատուցէ։

Խօշաբ։

Ունի բերդաքղաք գիւղաւար՝ ի հարաւոյն ձգտեալ՝ իշխանանիստ մնձմնուտն կոչեցեալ պէյից յատկեալ քրդաց. կառուցեալ առ սառոյտով լերին՝ ի ձորաձայրի, առ խօշատ գետով՝ ի մէջ խոյայ և վանայ, հեռի՝ ի վանայ իբրև 10 ժամուս յարևելս հարաւոյ։ Բնակիչք սորա իբրև 2000 տունք, յորոց իբրև 150 տունք են հայոց. որոց են եկեղեցիք երկու։ Ի վէր քարձրագագաԹին քարաձերին չոր ոչ կարէ հասանել ոտիւք հրաձինաց՝ ունի բերդ հզօր աշտարակաւոր պարսպատատ չինեալ՝ ի նահնեաց, անդ է և քարաձէն եկեղեցի փոքր, որ այժմ է՝ ի ձեռս տանկաց, ուր յաւուրս շաբաԹու և կիւրակէի լուացանեն ձրագ նոյն իսկ տաճկիք։

Յարևմտեան կողմն քղքին է գաղտավայր երկայ ձագել մինչև՝ ի տահմանս Ճուլամերկի և ոստանայ. յերկուց կողմանց երկու ջուրք բղխեալ՝ ի լերանց փոքր ինչ հեռի՝ ի քղքէն խօշատայ, միակցեալ գան անցանեն առ նովին խօշատ քղքաւ. որոյ հոսեալ յարևմուտս հիւսիսոյ ել քարաշէն կամրջաւ, զերծու՝ ի ծուխն վանայ։ Ջուր գետոյս քաղցր գոլով, ընկալաւ զանուն խօշատ, որ Թարգմանի՝ քաղցրաջուր. և յանուն գետոյն խօշատ կոչեցաւ և քղքն և ձեռն։

Ջնդաձոփ : Գիւղաքաղաք քրդաց իբրև 100 տուն կա-
ուուցեալ ի ձորավայրի, հեռի ի խոշտապ քաղքէն իբր
4 ժամու, մերձ ի սա անցանէ և խոշտապ գետ : Ու-
նի քարաշէն բերդ փոքրիկ, ուր նստի պէյ : Ունի
և այգեստանս պատուականս :

Հնթոփան : Գիւղ հայոց իբրև 30 տուն, 3 ժամու հեռի ի զեռնադմոյ :

Հոփոյ վանք : Ս. Նշանաստան իբրև 12 ժամու հեռի ի վանայ ի ձորամիջի, ի հարաւային կողմն առնոստա-
բն . առ որով անցանէ գետն ախթրխս կիմ չադ . և խա-
զացեալ ի կամրանս սղերթու և Ձէղերայ , ընթանայ
ապա առ մուտս ի սմա է պատկեր ծածանի՝
զորմէ տես ի հին հայատառն : Ս. թառեղ պարսպեալ
վանաց առ ախթրխս գետով է փոքրիկ մատուռն , յո-
րում է դերեզման արդասաց արքայի , գրէ Հայկա-
հան գրով ի վէմ տապանին (զորոյ զմարմին կիմ մատն
ինչ մարմնոյն , Թերևս զկնի փոխադրեցին աստ) .
անդ է և դերեզման մարիամայ քոռ յուսիկ իշխանին
ի փոքրիկ մատրանման վայրն . առ որոյ դերեզմա-
նաւ է և քարայր : Ս. յս վանաստան անկանի ախթրա-
ձէս ի ձեռնի խոշտապայ , այլ ըստ իրաց ինչ տիրէ և
առհմանակից պէյն Ջուլամերկի : Ի յերկրաշարժու-
թենն զորմէ գրեցաք վերագոյն ուրեմն , մերձակայ
լեառն Ղէնդնէր անուանեալ , ասասանեալ հատեալ ի վայր
առհասարակ եղեալ զձորն առաջնակայ , ըստ որում մեռան տըղ
երեք , և խափանեալ զընթացս գետոյն որ անցանէր
ընդ ձորն :

Ղգճաֆալա : Իբր 4 ժամու հեռի ի հոգւոց վանայ .
ի աւերակ բերդի ի գլուխս լերինն , որ ոչ բնչ առնէ
յիշ քանդեցաւ . յորում յիշատակն նուաեր և պէյ .
Ղասրիկ : Գիւղ առ ստորոտով լերինն ուր է ադձաղա-
ջայն , որոյ բնակիչք են իբրև 250 տուն քրդաց :

Վէրին էյոհա : Գիւղ հայոց մեծ ժամու հեռի ի ղաս-
բիկայ :

Ղպաղա : Ի փոքրիկ վիճակ , երկիր նը արգաւանդ
և խոտաւէտ . քերէ արմտիս այլ պտուղ ոչ այնչափ .
յորում յամարայնի բնակին բազմութիւք հէշերք քըր-
գաց . յատակագոյն ուռներ գիւղօրէս իբրև 100 , այլ
այժմ հազիւ մնացին ի նմ 40 , 50 գիւղօրէք առա-
խտաւութեց :

Ղպաղա : Յիշատակն էր բերդաքաղաք հզօր , երկօր-
հայ հեռի ի վանայ , իսկ ի սայէդիսոյ միօրեայ .
քաղքն և բերդն էին հաստել և շինել ի քարաշէրին .
ուռներ ամուր բերդս 4 , այլ քաղ էր գագաթ աւա-
ղա-

զակաց որոց իշխէր սէյ ումն էէզիտի, յայն սակս յաջ
մին 1788 վանայ փաշայն զօրու Ծանու՝ի վէր յարձակ
եալ զգոյս և զաւազակս՝ի բաց հալածէաց անտի,
և զմի բերդն քակեաց. ուստի երեքին բերդք միայն
մնացեալ կան այժմ լքեալ և ամայի։ Ի դժուարս քա
րաժայռ լերանց որ անէծ ժամն երթա, բղխէ ջուր
առատ բարեհամ և ցուրտ անհնարին. յոյր սակս կո
չի՝ի տաճկաց սօղուքբ տու. մինչև յամարայնին յոյլ
կանեչն՝ի նիւթ վարուձկ, իսկ և իսկ փչրի՝ի բշխմ մա
տուռնս։ Ա յս ջուր սկզբնաւորէ զպանտուռմահի գետն,
որ կոչի նաև բերկրի գետ. զորմէ առնս՝ի բերկրի գե
տառ. յորոյ վէր յաջագոյն հինն ջրաղաց իբրև 20։
Նոր գեղ։ Բնակիչք սր իբրև 20 տուն հայոց, իբրև
3 ժամաւ հեռի՝ի գետնապայ. և իբրև ժամաւ և կէս
սով հեռի՝ի հնաստան գեղջէն։

Ճ՝ուլամերկ, կամ Ջ՝ուլամերկ, և կամ Հաւէնց։

Ա յս գաւառս սահմանակից է վանայ, խոշապայ, և
պարսից, և սահմանին բաղնեցոյ՝ իհարաւոյ սահ
մանակից է չհրիզուրայ և սհրանու. իշխանուհին
գեղիս է՝ի ձեռս սահմին քրդաց որք կոչին Հաւէնց
ի. յայն սակս և համօրէն գեղն երբեմն՝ի նոյն ա
նուն կոչի. ունի շ իբրև վիճակս, քղքս, բերդ
բայս, և բազմուն գիւղօրէից բնակիչ՝ի քրդաց, ի
հայոց, և յատորբուց։

Ճ՝ուլամերկ. կամ Ջ՝ուլամերկ։ Բերդաքղք գլխաւոր հա
մօրէն գեղին, իշխանանիստ հաբեսարի քուրդ սէյի,
կառուցեալ՝ի տափահողմն փոքր լերին. իբրև վեցօր
եայ հեռի՝ի քաղաքէն վանայ։ Էն՝ի սմա մզկիթք,
մէարէսէք, և այլ շինուածք շինեալք՝ի հաբեսարի իշ
խանացն. բերդ սր է՝ի վէր լերին յարևմտից կուսէ
քաղաքին։

Ոպան։ Էր փոքրիկ վիճակ՝ որ՝ի բազմայ հեռէ անց
կաւ շ իշխանուհ սէյին Ճուլամերկի, զի յէնն էր
՝ի գեղին վանայ. երկիր սր խոտաւէտ մրգաւէտ և
շատաջուր. անցանէ և գետ որ յանուն Ոպանայ կո
չի. ունի գիւղօրէս իբրև 13 բնակիչ շ մեծի մասին
յազգէս հայոց։ Ունի գլխաւոր քղք Ոպան կոչեց
եալ, առ հարաւային ափամբ Ծովուն վանայ. 2 ժա
մաւ հեռի՝ի յաղթամարայ կղզւոյն. և իբր 7 ժա
մաւ հեռի՝ի քաղաքէն վանայ յարևմուտս հարաւոյ
նր. կառուցեալ առ արևելեան առորոտով քարալե
ռին՝ի ձորավայրի՝ ուր աւարտի դաշտավայրն։ Բնա

կինք սը քուրդք իբրև 600 տուն՝ ի մի կողմն քղքին
է աեղն պարսպատատ ուր նստեր պէյն. և է իբրև
այժմեան բերդ ոստանայ. են՝ լեռտան և կրկին և
կեղեցիք՝ ոյք այժմ են՝ ի ձեռս տաճկաց. յորոց մին
յիշատդյն կոչէր ՚ր աեփանոս։

Ի ծայր քղքին որ անկանի յարևելս հարաւոյ մերձ
՚ի ծուն՝ է գերեզմանատուն տաճկաց. ուր երևի աշ-
տարակաձև անկիւնաւոր շինուած ինչ կամուղի
կէիճ. որոյ բարձրաւ հատանէ՝ ի չատ աշտարակաց
էհան գուշէին տանտպօլու. չինել համեմ՚ ի տաղ-
տակ կոփածոյ քարանց, արուարուստ առհնրկ են
քանդակք գեղեցիկ փորուածոյք՝ ի վիմի. զոր կարե-
ծեն լինել գործ Ճարտարապետի խաչի եկեղեցոյն՝
որ՝ ի կղզին աղթամար. փոքր ինչ յաջ ոչ Թողուն
քրիստոնէից անցանել երթևեռաւ առաջի սր։

Ի գլուխ անդ քարաձերին երևի աւերակ նախնի բեր-
դին ոստանայ. ուր են քայքայել պարիսպք և աշ-
տարակք մեծաշէնք՝ ի նախնեաց կառուցեալք. եր-
կու Ճնշիկք են եղեալ այսր բերդին. մին՝ ի ծովուն
կողմանէ, և միւսն՝ ի ցամաքին կողմանէ։ Ճնշիկ է-
անեղոյ՝ ի ծովուն կողմանէ՝ է կառուցն փորեալ՝ ի
նախնեաց ՚ր քարաժայռ վէմ էրբին անհնարին աշ-
խատուե՚ ընդատուցոյ և անձուկ յոյժ, միանգ՚ ի վե-
րին կողմն. ՚ր ոք մի միայն հնձել կարէ անցանել,
և այն՝ ի տեղիս տեղիս հեռաւոր գնալով. այս անձ-
կապոյն վայրս կատարեին տեւէ երբեմն մի ժամ. իսկ ըս-
տորև տակաւ առ տակաւ լայնանայ մինչև՚ ի ծուն.
և այսպէս անհնարին է յոյժ կողմանէ ունել Թըշ-
նամւոյն մուտ՝ ի նախնի բերդն. զի միւն կարօղ է ՚ր
դէմ կալ հազարաց։ Իսկ Ճնշիկն եղանեղոյ՝ ի ցամա-
քին կողմանէ, անկանի յարևմուտս հարաւոյ առ քա-
րաժայռ գեղջ. և է Ճնշիկ հինգ տամ անցաւորաց. զոր
բնակիչք կոչեն Վերի Ճնշիկ։

Քաբաքաւք՝ ի հն՚՚ Մանուկերտ։ Գիւղ հայոց իբրև 10
տուն, կառուցեալ ՚ր զուռ՝ ի վայր լերին. յարևմուտս
հարաւոյ ոստանայ, ժամուռ և կիսով հեռի՚ ի նմանէ։

Յիշատակի այս անուն յայսմուռ. գեկտ. 15։

Հաղնոս. կամ Հաղնոտատ։ Լեառն բարձրագագաթ ա-
պառաժուռտ և լայնանիստ. ՚ի գլուխ լերինս է գե-
րեզման ճգնաւորի ուրուք, ուր գնան յուխտ՚ի տա-
նի վարդավառի։ Ի մէջ լերինս՚ի փորուիկ բլրակի որ
անկանի՚ ի հիւսիսային կողմն լերին անդ՝ ճաւհար
պէյն ոստանայ չինեաց բերդ ինչ փոքրիկ, որ ան-
կանի յարևելս կոյս ոստան քղքին։

ԿՈՒՆԱՊ։ Գիւղ հայոց յորում են տունք իբրև 15, ի դաշտի առ ոտամբ գետակաւ. ի քարաչէն եկեղեցւոջ սր որ է փոքր ի միջին սահմանի առ որմով կայ գերեզման Սիջն եղնչէի վրիպոյն, կրով պատեալ ղինի եկեղցոյն։ Ա՛ւ հիւսիսային ստորոտով առնուս լերին է մենաստան ոչն եղնչէի, մեծ և համակ քարաչէն, ոռ և եկեղեցի նր որ և ունի կաթուղիկէ։

ՍՊԷՈՒՆԴ։ Յարևելս ոտանայ իբրև 2 ժամաւ հեռի ի նմանէ. կառուցեալ ի գլուխ բլրոյն որ է ի վր առնու լերին ի հիւսիսային կողմն նր. ի ներքոյ նորաչէն բերդին՝ զորմէ պատմեցաք, բնակեալ ի միանձանց, որոց բնակարանք և եկեղեցի համակ քարաչէն, որ և ունի կաթուղիկէ։

ՇԱՐԲՈՒՅ ՔՈՒՐ, զոր առաքել կոչէ ՇԱՐԲՈՒՅ ԱՌՈՒ։ Ակն և ջուր անուանի, զոր ի սոյն շաւիղաւոյ անուն կոչեն հայք նաև քուրդք առհնդկ։ Բղխէ ի լայնաձաւալ ստորոտ առնու լերին ի տափակոյնն, 6 ժամ մաւ հեռի յոստանայ յարևելեան կողմն նր, 8 ժամ մաւ հեռի յարտաւետոյ յարևելս հարաւոյ նր. ի յարտաւետոյ անցանէ ի ձորուստան, անտի ի բերդ գակ, և ի բերդակայ ի յայգեստանեայս վանայ. ոչ ըստ ջուր քաղցր պատուական և առատ, դարձուցանէ զբաղարս, ուստի զմի այգեստանս և զարտեզս վանայ դաւառին, և բաշխի ի նոսա. մինչև չինալ ինչ խառնելոյ յայլ գետ կիմ ի ծով։ Ա՛յլ քղի բերէ հողբիմ, յոյն սակս երբեմն երբեմն մաքրեն զձորափոր ստրա իւրաքանչիւր գեղօրիք առաջի իւրեանց, և զհանել հողն դնեն ի գետեզերն. յորմէ Թուրք սր և ամբարտակ բարձրացել են յոյժ. ունի և կամուրջ ի վերայ։

ՄՈՒՇ, կիմ ՄՈՒՇ։ Ի վիճակ ի դաւառն ձորափորայ, որ ի հն" էր Ըարձակ, և էր մի ի ժԸ հին նահանգ մեծին հայոց։ Երկիր սր բարձր յոյժ լեռնային և անհնարին ապառաժուտ. մինչև հարկադրիլ բնակիչ քաց ը կոչկօք խիտ առ խիտ բևեռել բևեռս կոչեցեալ քէֆքէֆ կիմ քաֆքաֆ առ ի ջահիլ ի գնալն։ Ի բազմաթիւ բարձրագագաթն լերանց՝ որք ի հն" էին գօտի տորոս և կորդուաց լերին, բղխեն բազմութիւ աղբերաց պատուական ջուրց. որոց ամենեցուն հաւաքել ժողովին ի տիգրիս կիմ ի շատ գետ. յորոց մի է և գետակն առատահոս որ յանուն մոկաց կոչի, և խառնի ի տիգրիս առ պետար գեղջբ։ Ունի և անտառս մեծամեծս և մանուկս, բերէ որիշ պատուական, գինձ ՝ք գիշմիշ, ջաշիլ, մեղր, բամբակ. ի

կող-

կողմանս յայնոսիկ գտանի և ձկեր. ուստի հանկաս երկայ, և այծ բիւր. գործեն անդէն ցխակ՝ այն է շալի, զոր յաձախ՝ ի գործ ածեն սոսկ նաև բամբակայ խառն գործած, ի սիտոս գօտւոյ և գլխարկի :

Բնակիչք այսր վիճակի են հայք և քուրդք. բայց հայք խօսին՝ ի բարբառ ինչ օտար, զոր և ոչ իսկ վաղնեցիք կարեն իմանալ : Ի ձիկս նախնի օսմանեան արքայից անկանէր ըստ տուրս պէսպէս ձիգիրայի, այլ սակս բռնուած՝ ի բազմայ հեռաւ անցին ըստ տուրքի պէսպէս ձուլամերկի. սակայն միշտ ոմն ի հայոց մելիք և գլխաւոր հրամանատար էրէզ հրամանաւ ձուլամերկի պէսպէս, զոմ իշխանուն՝ ի գործ ածէ, բայց ի յարեանհեղուէ : Ոմն այս վիճակ բազմուն գիւղօրհեց. ոմք և են առհասարկ թիւմ աղթամարայ, յոբոյ զսմանս գիցուք :

Մ-ա՝, կամ Մ-գ՝. և եղծմամբ Մէ՛ : Բերդաքիւղ գլխաւոր լերան վիճակին ուր նստի պէրն. կառուցեալ առ ստորոտով լերին, ըստ մէջ նր անցանէ մեկաց վտակն. յորոյ վր ոմն և կամուրջ քարաշէն, զորմէ տեսանես առորև՝ ի շատախ : Բաժանի այս քիւղ՝ ի Թաղս 4. երկու Թաղք են՝ ի մի կողմն վտակին, և այլ երկու Թաղք՝ ի միւս կողմն : Աստանօր է մեծ նստատունն մեծ կոչեցեալ Ա-վենափրկիչ, ուր է գերեզման գտաղարայ, զոր ասեն լինել մի յերից մոգուցն, որոյ՝ ի գտանելն ըստ երկուց մոգուց յէէմայ, և՝ ի յօթևանելն ասէին, վասնճանեցաւ ասեն և աստ Թաղեցաւ. յորմէ Թերևս կոչեցաւ և անուն տեղւոյն Մ-գ՝ :

Ի հին կոնդակ լինչ վանացս՝ պատմի լեալ այսպիսի իմն պատճառիք : Ի բանակիլ Լենկթիմուրայ յայսմ վայրի, բնակիչք երկրին յորդորմամբ առաջնորդի վանացս զաւուրս երիս կերակրեցին զզօրս նորին. վոխարէն այնմ Լենկթիմուր խոստացաւ առաջնորդի վանացս տալ զոր լինչ և խնդրեսցէ. իսկ առաջնորդին զայս միայն խնդրել՝ ի նմանէ, շնորհել նմ զայնչափ գերիս՝ ի հայոց, որչափ լինչ մարթ էր հաւաքիլ յեկեղեցի մենաստանիս. և հաւաքեցան՝ ի նմա պատճառաւ 70 հազար գերիք, զոր ոչ կարէր տանիլ : Իսկ՝ ի տրտնջիլ վնր այսր զօրացն բռնաւորին, հրաման ետ երթալ առնուլ զնոս. բայց պատճառիք ոմն պահէ զնոս, ոչ ոք՝ ի զօրաց կարաց երթիք գտանիլ կամ տեսանիլ զմենաստանն, վնկ կոչեցաւ ասպա մենաստանն Ա-վենափրկիչ :

Ի վր քարաժայռ բարձրագլուխ լերին ուր ոչ հաս-

աս-

սանէ գնատակ հրացանի, ուխտ բերդ ամուր. որոյ ճնդհ ևս է ապատաժուտ և ջրկատոյտ։ Ունի այս ջղք վնիշն պատուղս, և կաքաւ բիշմ։ Սահմիկ լինի 'ի սմա հիւս կիմ ուսին։

Յաղին։ Գիւղ հայոց իբրև 40 տուն. հեռի 'ի մահա ջղքէն իբրև ժամն երիս 'ի հարաւակողմն նր. մերձ 'ի վտակն մահաց 'ի դաշտավայրի։ Ունէր առ յառաջ զարգն բերդ քարաշէն, զոր վնեաց իւրովք ծա խիւք անուանի մելիքն հայկազուն յովիկ կիմ յովհան նէս. ծախէր իբրև 200000 'ի շինուել նր. և գոլով մեծատուն յոյժ և այր ձարպիկ, զօրս չինէն ժողով եալ, զօրացաւ նաև 'ի վր այլոց քուրդ պէյից, և ըստ կամաց իւրոց փոփոխէր զնս, և զայլ բիշմ իշխա նուէին ցուցանէր. մինչև երևիլ փոխանորդ պէյին ձուլամերկի. այլ զարեէ քուրդք կոլմանցն խնդա նի և շիւռնանի, 'ի վր եկեէ պաշարեցին զսա 'ի սմին բերդի ուր միշտ ամրանայր. և 'ի ծածուկ հնարիւք լեան հրազինուք վնրասորեէ զնա ոչանչին. առեէ և զբերդն գտին յորմունս նր հիւսեալ անօթովք զը բաս. վայ մինչև 'ի հիմունս քակեցին յամին իբրև 1773. առ 'ի դրաւեէ զնմ թաքուցեէ դրամս։

ԱՂՈՒՆԻՑ ՅՈՒ։ Էր մի 'ի հին գեղացն մահաց նահանգին, իսկ այժմ գիւղ կառուցեէ 'ի ձորագետի, որ նոյնպէս կոչի ԱՂՈՒՆԻՑ ՅՈՒ. 6 ժամաւ հեռի 'ի մահա քաղաքէն յարևմուտս հարաւոյ նր. բնակիչք նորա քուրդք իբրև 100 տունք։

Գեաբէր։ Գիւղ հանդէպ վերոգրեէ առուձանից ձո րոյ կէս ժամաւ հեռի 'ի նմանէ, 'ի միւս կողմն գե տակին. բնակիչք նր իբրև 30 տունք հայոց։

Փախանէր։ Գիւղ հայոց իբրև 30 տուն. հեռի 'ի գեղ ջէն առուձանից ձորոյ իբրև մի ժամ, առ նովին ձո րագետով։

Սուբ։ Գիւղ հայոց իբրև 30 տուն առ մահաց վտա հաս, բայց 'ի վերձակի առուձանից ձորոյն. իբրև 2 ժամաւ հեռի 'ի յարևմուտս հիւսիսոյ նր։ Լինի առ տանձ պատուճական, որ յանուն գեղջն կոչի սուրբայ տանձ։ Իբրև կէս ժամ հեռի 'ի գեղջէն' և սուրբայ վանք քարաշէն, 'ի ծառախիտ և 'ի զուարճ ձալի վայրի։

Ղանլընից վանք։ Մենաստան քարաշէն 'ի վր լերին, 2 ժամաւ հեռի 'ի յարևելեան կողմն նր։

ՀԱՊՏԱՆ։ Գիւղ հայոց իբրև 40 տուն 'ի վր լերին. իբրև 4 ժամաւ հեռի 'ի մահաց վտակէն. և 'ի ջղքէն վանայ իբրև հուսկեայ յարևմուտս հարաւոյ նր։ Իբ

րև

թե քառորդաւ հետի՝ ի դէղձէն՝ ի Ալարանից վանք քարաշէն, եկեղեցի նր ունի կաթուղիկէ. յաջակողմն նր՝ ի դասին՝ ի քարինս հիմանց՝ երևի վէմ լինչ ար տուքս կարկառէլ՝ ք զայլ շրջակայ վէմսն. ուր առ փոփեալ կայ առեն մատն խաչատիպսն բերել յաւուրս վասլն և հոռոմոսդեայ յամի 983. զորմէ առնս ի ձառս ալարանից խաչին։

Պէքաթ։ Գիւղ քրդաց յէղջէր անդ՝ ուր մոկաց վերաւակն խառնի՝ ի սեպրիս կիմ՝ ի շատ. հետի յաղարտանից երբեմն 6 ժամաւ։ Լինի՝ ի սահմանի սր որիշ, քան միչ, գինձ այն է գիշմիշ, և նուռն։

Փառ։ Գիւղ հայոց յորում են տունք երբեմն 30՝ ի ձորագետի որ յանուն սր կոչի Փառայոր. երբ 3 ժամաւ հետի՝ ի մոկաց՝ քղքէն յարևմուտս նր։

Փուշէնց։ Գիւղ հայոց երբեմն 30 տուն, հետի՝ ի փառէն կէս ժամաւ՝ ի նմին փառաձորի, ուր գտանին և այլ գիւղօրէք։

Ճինու ձոր։ Ձոր հետի՝ ի մոկաց՝ քղքէն երբեմն միօրեայ, յորում ոչ սակաւ գիւղօրէք գտանին առնիրկ հայոց. և զի գտանի՝ ի սմ հարուստ հանք երկաթոյ, բնակիչք ամենին են դարբինք և երկաթագործք պատրաստէք ինեանդ՝ ի շինուածի. բևեռաց՝ ի բևեռել ընդ կօշկօք սակս ապառաժուտ գոլոյ երկրին, ոչ պատմեցաք՝ ի վերոյ. և՝ ի շինուածէ սառն կոչեցաւ սանին Ճինու ձոր։

Ճապախ։ Վիճակ՝ ի գաւառին ձուրամերկի, ուր նահն մերձ յայգիս հայոց. և՝ ի գործ ածէ զնոյն նշխանուն և զդասաւորական պաշտօն. զի ոչ թողուն քուրդ ոչխոց նահել սահն, ոչ և՝ ի մոկս։ Երբեմն երկու սր առաքեցեալ հետի՝ ի քղքէն շահասիրս բղխեն սեպրիս կիմ շատ գետն. որ սահն յանուն վիճակին կոչի Ճապախու գետ. և թերևս անուանս Ճոր, զոր քուրդք և այլ ազգք սան մանաւանդ պատիս սեպրիս գետոյ, և համառօտեալն անուանին Ճապախ. քանզի բնակիչք զոյս վիճակ համարին մեծ ակն սեպրիսի։

Ունի այս վիճակ բազմութիւն գիւղօրէից ըստ մեծի մասին բնակեալ՝ ի հայոց և՝ ի սահմանս քրդաց. և են թիւմ ազգ ամենայն։ Նոյն թուի մեզ լինել, կիմ ասի՝ ի յահանոյ սր Էջմիածնի Լուսն, զորմէ քեռասիկ չէ՝ ի սառաքրեէն զլուսն բազմոյ գրէ այսպէս. «Ասէ սլխուկա (ոչ Լուսն բազմոյ. սա առաջի ուշէն բերի) գնն ըլ Լուսն Հալէսաի խառնի. որ բղխի յերկուց ականց, անն մեծագոյն վտակին Եփրատ մերձ՝ ի բերդն Մէքս (մոկս) յայրէ լմնքէ էրգնն՝ որ է այլ մեծ.

• մեծ. այս ջուր խառնել ընդ գետակին միևնոյնպես,
• և յետոյ առ սրբատիւ առաջի զերկուս բերդին միակ
• յն ընդ ջրոյն պիտանի ճերմակ ի ուրչին. ի միջին սահ
• մանի ջրոյն է վճիտ ինչ զոր կոչեն գարընձա գայա
• սի, սակս յոլովախուռն մրջմանց որ ի նմա։

Ծաթախ։ Քղաք գլխաւոր ի համանուն վիճակին առ սրբընթաց գետոնէն տիգրիսիւ կիս շաւտախաւ։ Բնակ կիչք սր տուն ք եբր 500, ըստ մեծի մասին յաղգէս հայոց և սակաւք ի քրդաց։

ՀՂԲԱԿ, տձկ՝՝ կոչեցեալ ՀՂԲԱՓ։ Վիճակ փոքր ի գաւառին Ճուլամերկի. ի սմա է վանք բարդուղիմեայ առաքելոյն եբր եռօրեայ հեռի ի վանայ։

ԽԼԱՒ. տձկ՝՝ ԻԽԼԱՒ։

Այս գաւառ ձգի առ արևմտեան եզերբք ծովուն վանայ, սահմանակից սանճագին վանայ, արծկէոյ՝ որ է աշխարհագ, և բալիշոյ՝ այն է պլնգիղ։ Օդ նորա բարեխառն, երկիրն պաղաբեր՝ լի այգեօք և պարտիզօք. բերդ արմախս և ազգս ազգս պտղոց. յորս երեսելի է ծիրանն և խնձորն, որ սովի մինչև ի կոշմանս ատրպատականի այն է ատրպէճան. և յանուն սր կոչի ի պարսից սիպի նիշատդ ըն խնձոր նշաձեան. որոյ մին կշռէ 100 միրհեմ. բայց առատ և ընտիր ըն զնամ՝ է երկու տեսակ ցորենոյ սր, որ եշանէ միայն ի նշաձ և ի բազնոց. յորոց միոյն ծիղ է բազմատեսակ երբեմն զծաւ և բազմահատակ. և միւսն մեծ և քաղցրահամ, որ անուանեն կոչն գիր. զորոց տես և ի ներածուն հայաստանեայց։

Խլաւ։ Քղաք գլխաւոր ի համանուն գաւառին. առ արևմտեան ծովեզերբք ծովուն վանայ ի դիւր տեղւոջ, հնգօրեայ հեռի ի վան ընդ արևելս, և միօրեայ հեռի յարծկէոյ, մերձ ի բալիշ։ Բնակիչք սր քուրդք երբեմն 1500 տուն ք. են ի սմ բազմ մեծաշէն շինուածք հանդիպել ի թիքրաց այլազգեաց։ Առ ափն ծովուն են տեղի պարսպատատ, ուր նախն սկէն հանօրէն անձագին, որ է շինեալն սուլթան սիւլէյմանին։ Բազմ իմաստունք այլազգեաց ծագկեցան ի հնումն ի սմին քղաքի, ըստ գրելոյ ձիհաննիւմային։

Աբասէրոյ քղաքին ոչ յոյժ հեռի բղխեն յատասպարոյ բազմ ակունք քաղցր ջրոյ. որոց գետակ կազմէ ի մէջ խլաթայ և արծկէոյ թաւին ի ծով։ Մերձ ի քղաքն են շիրիմք կիսթիւրպէք դմբեթաւորք կանգնեալք ի վէր անանց առաւել ք զ։ յորս են մարդ

մինք

մինք ելեկէք յարկեղ (Թասլուճով)։ և ուրեք ոչ
րեք երևին 'ի նոն նաև մարմինք զմռսեալք։ Երևին
առ նոքօք և բազմութ դերեզմանաց, 'ի մեծամեծ քա
րանց կարմիր և սպիտակ, և 'ի նոն դրուճագք բիլմք։
Դոպուճան։ Գիւղ յարևմտեան կողմն ծովուն վանայ,
փոքր ինչ բացատ 'ի ծովեզերաց. Ունի օթևանատ հե
ռի 'ի խլաթայ. բնակիչքն իբր 100 տունք ըստ մեծի
մասին հայոց և սակաւուց քրդաց։ Ի գլուխ լերին
ունի բերդ ամուր, 'ի ցոյց՝ ըստ կիմ աւան լինելոյ
սր 'ի նախնեաւն։ Ունի նեհնդիսատ անբոյթ բաւա
կան 20, 30 փոքրիկ նաւուց. պատեալ յայմ կողմանց
բարձրաբերձ առատաբոյս, որոյ մուտ անձուկ. ասլ
տանօր բառնան զվաճառս 'ի կրել 'ի վան, որ և ձա
նապարհն գրեթէ 24 ժամուց, եւակ ըստ ցասնաք ուղե
որիսոյ ձնհղն և ձիաւոր առն։

Թնեղոփ։ Գիւղ հայոց 'ի սահմանս լերինն նեբրոտ
թայ. որ հեռի է 'ի խլաթայ իբրև 3 ժամաւ. (ղոլ
մէ տէս զնեաան գուրդուա 'ի բառիդ)։ Ա. այս գիւղ
է վանք կոչեցեալ Ա՛ր յոհաննէս։

Ա՛ր ոոո։ Վիմակ լերնային 'ի ձեռն խլաթայ. 'ի
հիւսիսոյ սահմանակից է սա բազնոցայ. յարևմտից՝
մալազկերտի. 'ի հարաւոյ և յարևելից՝ ձեռն խլա
թայ. բերէ ցորեան ընտիր և առատ, և այլ արմտիս.
կոպէ և պանիր. ևն։ Ունի լիճ անոյշ ջրոյ, որոյ լերա
նային եղերդնուտ շրջապատն տևէ ժամն իբրև 4.
առ եզերբ ջրին են դիւղօրէք սր, որք են 8, 10. ո
մանք հայոց, և ոմանք քրդաց։

Ա՛ղթամք։

Ա՛ղթամք կոչի Ա՛ղճավաշ, կիմ Ա՛ղթընճվաշ, յոյր սակա
դրի յ՝Յոհաբրական բառարանին երեմիայն, թէ
Ա՛ղթամք Ա՛ղճաւաշ է։ Է ամի 'ի ձեռաց փաշայոնէ վա
նայ, ըստ մէջ խլաթայ և արձիշոյ. ձգէլ առ հիւսի
սային արևմտեան եղերբք ծովուն վանայ։ Բերէ
ցորեան պատուճական և գարի, զոր տանին նաւուք
'ի վան քղաք. և այլ արմտիս. և երկանագործ. ունի
և այդիս բարեբերս։ Ունի բերդաքղաք համանուն
գլխաւոր համօրէն ձեռին, հեռի յարձիշոյ 2 օթևա
նօք, կառուցեալ ըստ զառ 'ի վայր լերին. բնակիչք նը
տունք իբր 500 'ի հայոց և 'ի քրդաց։ Բերդ սր է
բնական վէմ որձաքար կանգնեալ իբրև պարիսպ, և
հասանի մինչև 'ի ծով. 'ի գլուխ վիմիս է տեղի պարս
պատպատ՝ ուր նստի պէկն, 'ի ներքոյ ջուրց ծովուն

Երևելին ոչխարն քարայրին չինուածք սը ընկալեալ ի վաղ ժամանակաց ։

ՀՐՃԵՂ, կամ աղաւաղանօք ԻՐՃԵՂ ։

Պաւաւ լը մէջ արծիւ և բերկրի գետացն ձգել առ հիւսիսային եղերքը վանայ ծովուն, բերէ զարմանիս, գալի և ցորեան, և բամբակ, այլ միրգ սակաւ • բերէ և երկանաքար ։

Գլխաւոր քաղաք սը նոյնպէս արծիւ կոչեցեալ է առ արևն վանայ ծովուն, յ աւուրըք հեռի ի քղքէն վանայ ի հիւսիսակողմն ի գիւղ տեղւոջ ։ Բնակիչք նը տունք իբր 1500 լը մեծի մասին ի քրդաց, և սակաւուց ի հայոց, որոց են 2 եկեղեցիք ։ Ունի պարսպատատ տեղի ուր բնակի պէկն • առ քղքաւն անցնէ և գետակ որ կոչի յանուն Հրճիւայ ։

Կերմանիկ ։ Գիւղ հին՝ ոչ այնչափ հեռի ի յարձիլայ ։ Մէծոփայ վանք ։ Մենաստան կառուցեալ յանուն ՅԾածծնի ի լեռնատատ ձորամիջի ի հիւսիսակողմն արձիլայ 4, 5 ժամաւ հեռի ի նմանէ • վինուած նը քարուկիր գմբեթաւոր, դրկթէ լը մեծուքէ տաձարի առաքելոց վանայ մերձ, յարեւելակողմն եկեղեցւոյն են փոքրիկ մատուռք երկու • յորոց ի միումն է գերեզման նշանագործ ՅԾածատուր վէրպի, իսկ ի միւսում մանն ինչ նշխարաց յակոբայ ՅՈն եղբօր • յորոյ անուն է կառուցեալ և մատուռն ։ Յայս մենաստան են գերեզմանք Թովմայի մեծոփեցւոյ • եղբօր նորին Պօղոսի եպսկ • Մխիթարայ վէրպի սատուցւոյ, և Սահակիանոսի վէրպի և նահատակի ։

Իբր կէս ժամաւ տարակաց ի վանայս ի հիւսիսակողմն նը յեակոյս լեռնակին է ոտ որ է փոս մեծ, ուր ի հն՛ պատէր գոլով Թմբուկք հաւաքել ինայր ջուրն • բայց այժմ բարձեալ գոլով այնպիսի արգելանաց, հաւաքէ ջուրն ի նմա հոսի յարձէ, և առնուն նը խառնի ի ծուխն վանայ, ի սմ բնակին այժմ վրանօք տոհմք քրդաց ։ Յանուն սը մենաստանն կոչեցաւ Մէծոփայ վանք, իբր Մէծ ոփայ վանք ։

Յաւելք ։ Գիւղ՝ որ յանուն եկեղեցւոյ իւրոյ ոչ յարուէ անուանեցաւ այսպէս, մերձ ի վանս մեծոփայ իբր 1 ժամաւ • յեկեղեցւոջ սը է տապան յոհաննու արձիլեցւոյ մականունեամբ կոչեցեալ Ոսկնկեր ։

Բեհիւէ, կամ Պահիւէ։

Պահաւառ ըստ մեզ վանայ և արձիշոյ ձգեալ յարևելս հիւսիսոյ ծովուն վանայ։ Ունի գեա մեծ քան զմարմաւոյն. որ կոչի Պանդոմահի գետ. և յանկոյ Բեհիւէ յանուն քղաքին և գաւառին. բղխի սա՝ ի խոշատ մերձ՝ ի գիւղն ասպաղա, ոտ հեգաք՝ ի վերոյ. և անց. եալ առաջի բերկրի քղաքին մտանէ՝ ի ծովն վանայ. ունի զերիս կամուրջս՝ յորոց երկուքն են քարաշէն. գոանի յայս գետ տառեխ ձուկն յոգնաթիւ. զոր բնակիչք՝ ի բերան գետոյն ուտիան եդեալ ւիւրում ժամին՝ որոան առատուբ։

Բեհիւէ։ Գիւղաքղաք բերդաւոր՝ ի ձորամիջի մերձ՝ ի ծով. յարևելս հիւսիսոյ քղաքին վանայ իբրև 12 ժամ տառ հեռի՝ ի նմէ։ Բնակիչք նը տունք՝ իբր 300՝ ի քրդաց և՝ ի հայոց. առ սովաւ անցանէ գետն պանդոմահի կամ բերկրի. յորոյ վը ունի տառաջի իւր կամուրջ քարաշէն բազմակամար։ Ունի բերդ՝ ի քարաժայռ ուր նստի պէյն. զոր տուլգան սիւլէյմանն նորոգեալ։

Վանդ եբյն սպէիանոսի։ Կատուցեալ է՝ ի վը լերին՝ որ անկանի հանդէպ բերկրի գիւղաքղքին յարևմուտս հիւսիսոյ նը. յայնկոյս պանդոմահի գետոյն։ Էն՝ ի տամ կրկին եկեղեցիք բացատ՝ ի միմեանց առհարկ քարաշէնք ոտ և մեհատանն, որք և ունին կաթուղիկէ. յորոյ մին է յանուն ծոտածնի, և միւսն յանուն տըչն առեքանոսի որդւոյ սոն յուսկան. որոյ գերբելման է յայլակոզմն տաճարին՝ ի կոզմն տւտաղանին։

Գոռոգոլ, կամ Գոլգոլ։ Գիւղ հայոց իբրև 100 տուն 6 կամ 7 ժամաւ հեռի՝ ի բերկրոյ։ Բերէ զարմանս, այլ պատուղ ոչ այնչափ։

Հայոսոր պաղէ։ Գիւղ զոր ձիհանննւմայն գնէ՝ ի մէջ բերկրոյ և արձիշոյ։

Բաղէշ, տճկ՛ Պէուէ։

Վ հնոյն ըստ մասին կոչէր Սաշոյ յոր. որ էր մի՝ ի գաւառաց աղձնեաց նշխարին։ Ջատուգաբանուբ անուանս Բաղէշ տես՝ ի տատրագրուբ քղքին բաղէշոյ, յորմէ տունս զանուանն և համարէն գետն։ Ա՛յս գետ ընդարձակ յարևելից տահմանակից է խլաթոյ և գաւառանոյ, յարևմտից՝ մշոյ. ի հիւսիսոյ՝ մալազկերտոյ. պատեալ դժուարամատոյց լերամբք։

Բնակ

Բնակիչքն են ըստ մեծի մասին զնչին ցեղք քրդաց • յո-
րոց ցեղ ինչ կոչի Աղբաքանէ , բայց յայն գիւղօրէս՝ ուր
գտանին յաղագս հայոց , խօսին առհասարկ նաև հայե-
րէն • և ոչ են վրանաբնակք և թափառականք , այլ
ունին հաստատ բնակութիւն ։ Յառաջադոյն բազմութիւ
կային հայոց յայս ձգտ , այլ սակս պէսպէս հարստա-
հարութեց ցրուեալ՝ այժմ սակաւ մնացին • լեզու նոց
ծանր է և տարբեր յայժ յայլ գաւառական լեզուաց
հայոց ։ Ունին բազմ վտակս կարկաջասահս որք խառ-
նին՝ ի տիգրիս գետ • ունին և գետակ յանուն իւր կո-
չեցեալ Բաղնիս- ջուր • առ՝ Աղթ պիւնիս • որ խառնի
ապա ընդ ջրոյն Եփրատ , ղորմէ տես՝ ի շտապս վանայ ։
Օդ սր քաջառողջ , մանաւանդ՝ ի սահմանս ձորոյն բա-
զնիոյ • հիւանդութիւնք որք յամառեն անդէն , են որա-
ցաւ կիր ըստ ուղիղ հնչման տիրացաւ • որ է ցաւ որ
դիւրաւ տիրէ մարդոյ և տպանանէ • այսպէս կոչեն
անդ զհիւմնան ։ Ցաւ աչաց՝ որ լինի՝ ի սիրոցն դար-
նան • բայց դիւրաւ և անվնաս անցանէ ։ Խակ ժան-
տախտ հազիւ երբեք հանդիպի , բայց լինի չարաչար
յոյժ , ոչ սովորութիւն է այսր տիտղ տաստիկ զօրու-
նալ՝ ի տեղիս՝ ուր ոչ լինին տաէպ ։

Երկիր սր լեռնային և ձորաւայր բազմ , ուր՝ ի ձմե-
րայնի տաէպ տաէպ լինին հիւսք կիր ուսինք վտան-
գաւորք , և բուք անհնարին • ունի անտառ բազմ
յոյժ պտղատու և վայրի ծառոց , որ ընկուզենեաց ,
տանձի , կաղնոյ՝ այն է մկըճի , ևն ։ Ի վեր բարձրա-
բերձ անմատոյց լերանց գտանին ուրեք ուրեք ծառք
ընկուզոյ մեծամեծք անկեալք յատուաւուց , ուր չ-
մարթի մարդոյ մերձենալ սակս դժուարութեե տեղ-
ւոյն • զի ապրաւ անյագ առ ընկոյզն , յետ ուտելոյն
առնու նաև՝ ի բերանի , ամբարել կամելով առ ա-
գահուեն , և տարեալ յանմատոյց լերինս թագուցա-
նէ ընդ հողով , զամսն նշան իւր եգեալ ոչ ասեն՝ ի
գտանել • յետ անցման ձմռան՝ քզն ոչ կարէ գտա-
նել յոլդյոլդուն նշանաւն , բռնասանի ընկոյզն և լք-
նի ծառ մեծ յայնմ անմերձենալի վայրն ։

Խոտք ծաղկք և բոյսք բազմոյ բազմ են և գեղ օգ-
տակար կենաց մարդկան , մինչև ընդ արժանւոյն ա-
սել , թէ բժիշկք բազմոյ են բոյսք իւր • որ է մանր
տակ , ՚ի պատսպարհայոց կոչեցեալ շուշան , որ է խոտ
անուշահոտ նման սերևոյն տատղինի , այն է հավու-
ճի , և ՚ի գորճ ածի ՚ի կերակուրս • օղին կիր ըղձն խոտ
առողջարար վըր ուտեն • խակ զտրմատան նր կիր ընդ
բարբառոյ նց ըմբղեղան գործեն շրհղ , այն է չիրիչ

'ի պէտս հօշակարաց և կտաւատործից . ճնծաղիկ անբաւ առատութիւ որ ծածկէ զեմ երկիրն . սպիտակ կուկ իւ սպիտակուկ , բանջար՝ զոր չորացուցեալ 'ի գործ ածեն 'ի կերակուրս . սունկ իւ մանեաւոր ընտիր առատ և մեծ չոյժ . մինչև չորեքունց լինել մի բեռն մարդոյ . խաւրծիլ բիւմ չոյժ , մինչև չօդպայն մի փարայ , որոյ գոլով հիւթաւորը և զովացուցիչ , ղհիւթ նր չամարայնի իւ ջուր խառնեալ ըմպեն . խակ ղաբմասն՝ որ է բնիկ դեղն ռավինտի , չունին այնչափ ինչ փոյթ ժողովելոյ անդէն . նէրկիզ կիմ պէպաւն , ծաղիկ դեղեցիկ և քաղցրահոտ , բարձրանայ չերկրէ 'ի չափ զնեմպիւզի կիմ ֆուլեայի , տերեւովք դրեթէ նման նմ . խակ ծաղիկն լինի մեծ և տատիասակ , բոլորեալ 'ի բիւմ մանր քառատերև ծաղկանց . պէսպէս գոյնով գոյանին 'ի սոսա , սպիտակ դեղին , կարմիր , և ն : Գոյանի և նորանշան լինն տեսակ վարդի , որոյ ձեմ թերթիկն մի կողմն է 'ի գոյն դեղին , և միւսն 'ի գոյն կարմիր , հոտով նման դեղին վարդի : Ունի և մեղր առատ :

Բերէ ապգս ապգս պտղոց ընտիրս և առատս՝ ծիւնդ խնձոր , տանձ , և 'ի ձորավայրս իւր հարաւայինս բեր և ձիթենի . և գինի խտնաբոյնիկ կոչեցեալ , որ է աղնիւ . խակ զայլ տեսակս պտղոց բերեն 'ի հարաւային գաւառս , 'ի խիշանայ , 'ի զըռըզանայ , 'ի չիրուճանայ , և 'ի կիլիկիանայ , զթուզ , զնուռն , զկաղին , ըղջամիչ , զսեխ , զնաղղ , զդինձ իւ գիշմիշ , և զսկէքմէղ են : 'Ի թռչնոց ունի կաքաւ , լոր , տատրակ , արտս , տարեակ և ճարեկ , հազարան պիւլպիւլ , որ է իբրև լոր . գլուխն և ոտքն սեաւ , խակ մարմինն ծիրանի դեղին , ձայն նր քաղցր . վայրենի բադ և տատ . ն : Խակ 'ի չորքոտանեաց եղջերու , այծեամն իւ ձէյրան . վայրի ոչխար , և այծ զոր կոչեն վերի էձ . վարազ , եղն , աղուէս , արջ՝ նաև սպիտակ . գոյանին նաև օձ

Ունի նաև հանքս (կիմ ըստ նր քեարխանս) դեղին , կարմիր , սպիտակ , և սեաւ մարմարիոնանայց . և ունի սուն գոյանին անդէն նաև հանք ոսկւոյ և արծաթոյ , այլ տակս քղքահան պատճառաց անգործ կան : Ունի և հանքս ծծմբոյ առատ . 'ի քղքին բաղխոյ գոյ թաղ ինչ և ձոր , որ հանէ 'ի խնդրակատար ածածկինն . և կոչի այս ձոր Գաստախոտիկ , վ գարշուէ ծծմբայնն հոտոյն որ անդ :

Իշխանուհ բաղխոյ երեւելի էր 'ի մէջ ամ իշխանուհոց քրդաց , և մի միայն 'ի նոս՝ որ Խան անուամբ կոչի .

զի այլ ամ իշխանք նոյ կոչին Պիկ անուամբ. և Թէ պէտ այժմ նուազեաց յոյժ իշխանութիւն նր, բայց մեք առարաբեցուք ոյզ էր յառաջն։ Այս անուն խանի սկզբնաւորեցաւ ի հին՝ 937. յորժամ ուղա մէ խանն պարսից փախուցեալ ի պարսից, եկն ե մուտ ի հնազանդութիւն ս. սուլ՝՝ սիւլէյմանին, և զի ինմին ձմեռն էրիվ պէկ բազիշդ ապստամբէր յօսմանեանց՝ անկաւ առ պարսիկս, իշխան բազիշդ կարգեցաւ ուղամէ խան. և Թէպէտ էրիվ պէկ զօրօք ի վր յարձակեցաւ, այլ պարտեալ, գնաց նոքին ոյզ և կուսակցացն առաքեցաւ ի ստանալ. և այսպէս այս իշխանութիւն է ի ձեռս առնմի ինչ քրդաց՝ որ եկեալ է ի պարսից. վայ վրնասն դալէնիկ, և յետ նր այլք յետրոպեանց. որ զնշխան սր պէշ անուամբ կոչեն։

Սահման սր յառաջագոյն ի ձմեռն զօրաւոր խանիցն ձգէր մինչ ի սահմանս վանայ քղքին, և մինչ ի սահմանս տիարպէքիրոյ փաշային, ըստ որում կային բիւր պէշտութիք քրդաց. բայց յետ 1741 ամին օրըստօրէ նուազեաց սրութիւն նր. և եղև նկուն դրեթէ ըստ ձեռամբ մեղ պէկին. մինչդ յորժամ մեղ պէկին լինի այր զօրաւոր։ Ի կարգի սանճագացն ի սկզբանէ անտի անուանեցաւ ձեռն փաշայութիւն վանայ. ըստ որում քաղաք սր և գիւղօրէք ունին առ տարեկան տուրս ղուրշ կիս բերդապահ զինուորացն վանայ. բայց յայլ գործս ոչինչ կարէ իշխել փաշային վանայ, ոչ կարէ աւազակել միւսպաշիր ոք, և ոչ միւթէսէլիմ. և ն։ Նաև ի սկզբանէ անտի աղատ եղև յարքունի հարկաց և ի տուց. ոյզ զի համարձակ լինցի երթևեկութիւն կարաւանաց և ամ ձնհոտից ի սահմանի սր. և բնակիչքն մի ինասեսցեն նոյ, նաև մի թողցեն այլոց ինասել. զի ըստ այս ունին անցանել կարաւանք պաղատացի, հալպայ, և ի թէվրիզ և յայլ կողմանս. յայն սակս տրութիւն պարսից և տաճկաց

Ջանան միշտ հաշտ պահել զսա։

